ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 3. 1965 Общественные науки

ԳԵՎՈՐԳ ԱՐՇԱԿԻ ԱԲՈՎ

Վախճանվեց հին բոլշևիկ, անվանի գրականագետ, գրող, արվեստի վաստակավոր գործիչ, դոկտոր, պրոֆեսոր Գևորգ Արշակի Արովը (Արովյան)։

Սովետահայ մշակույթը հանձին Գ. Արովի կորցրեց իր լավագույն ներկայացուցիչներից մեկին, մի այնպիսի գործչի, որ մեր երկրում սովետական կարգերի հաստատման առաջին իսկ օրից իր ուժերը նվիրել էր սովետահայ գրականության, արվեստի, լուսավորության ծաղկման ու առաջընթացի շնորհակալ գործին։

Գևորգ Արովը ծնվել է 1897 թ. Թիֆլիսում։ Սովորել է Ներսիսյան դպրոցում, որտեղ և ծանոթացել է մարքսիստական գրականությանը, մասնակցել աշակերտական մարքսիստական խմբակների պարապմունքներին։ Դպրոցն ավարտելուց հետո նա ծառայել է բանակում, որպես զինվոր-գնդացրորդ։

1918 թ., Վրաստանում մենշևիկների տիրապետության օրերին ռևոլյուցիոն տրամադրություններով համակված երիտասարդը ձերբակալվում է և մեկ տարի Քութաիսիի բանտում կալանքի տակ մնալուց հետո փախչում։ 1919 թ. նոյեմբերին Գ. Արովը Եղիշե Չարենցի հետ աշխատում է Կարսի շրջանի Բաշքագիկլար գյուղում որպես ուսուցիչ։ Սակայն այստեղ ևս ձերբակալվում է, այս անգամ՝ դաշնակների կողմից, և բռնի ուղարկվում զինվորական ծառայության։ 1920 թ. Գ. Արովն ընդունվում է բոլշևիկյան պարտիայի շարքերը և ակտիվորեն մասնակցում Հայաստանում սովետական կարգերի հաղթանակի համար մղված պայքարին։ Երրորդ անգամ Գ. Արովը ձերբակալվում է 1921 թ. փետրվարին, դաշնակցական ավանտյուրայի ժամանակ և բանտից ազատվում նույն թվականի ապրիլի 2-ին, ավանտյուրան ջախջախվելուց հետո։

Այնուհետև սկսվում է Գ. Արովի գործունեության նոր ու բեղմնավոր շրջանը։ Գրական հարուստ ձիրքով օժտված երիտասարդը դառնում է սովետահայ գրականության ականավոր գործիչներից մեկը։ 1922 թ. հունիսին Եղիշե Չարենցի և Ազատ Վշտունու հետ նա ստորագրում է «Երեքիս» հայտնի դեկլարացիան։

20-ական թվականներին Գևորգ Արովը հանդես է գալիս նոր բանաստեղծություններով, պատմվածքներով, ակնարկներով։ Այդ նույն տարիներին նա աշխատում է որպես Հայաստանի պրոլետարական գրողների ասոցիացիայի քարտուղար (1925—1931), պարտիական ու գրական մամուլում տպագրում է ուշագրավ հոդվածներ՝ նվիրված պրոլետարական գրականության և անցյալի գրական ժառանգության հարցերին։ Միաժամանակ նա դեկավար աշխատանքներ է վարում սովետահայ կոլտու-

ռայի զանազան օջախներում, աշխատում է որպես Հայաստանի պետական թատրոնի դիրեկտոր (1928—1931), լուսավորության ժողովրդական կոմիսարի տեղակալ (1934—1936), Մատենադարանի դիրեկտոր (1940—1952), դասախոսում է հայ գրականություն և գրականության տեսություն՝ ռեսպուբլիկայի բարձրագույն ուսումնական հաստատություններում, խմբագրում ռեսպուբլիկայի գրական պարբերականները։ Այնուհետև աշխատանքի է անցնում Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի Մ. Արեղյանի անվան գրականության ինստիտուտում, որի ավագ գիտաշխատակիցն ու գիտական խորհրդի անդամն էր մինչև կյանքի վերջը։ Բոլոր այս տարիներին Գևորգ Արովը դրսևորում

է գրողի և հետազոտողի բազմակողմանի ունակություններ։

Հայրենական մեծ պատերազմի օրերին Գ. Արովը հանգես է գալիս սովետական մարդկանց հերոսական պայքարն ու աշխատանքը պատկերող հետաքրքիր ակնարկներով, պատմվածքներով, որոնք զետեղվում են 1943 թ. հրատարակված նրա «Ռազմաճակատում և թիկունքում» ժողովածուի մեջ։

Մեծ է Գ. Արովի վաստակը գրականագիտության ասպարեզում։ Հայ գրականության զարգացման բոլոր փուլերին քաջատեղյակ գիտնականը տասնյակ արժեքավոր աշխատություններ է թողել ինչպես հին, այնպես և նոր ու սովետական շրջանի հայ գրականության ամենատարբեր հարցերի մասին։ Հիշատակելի են հատկապես նրա «Արդարության ու սիրո երգիչը»՝ նվիրված Սայաթ-Նովային, «Խաչատուր Աբովյան» և «Գաբրիել Սունդուկյան» ծավալուն մենագրությունները և նրա եռանդուն մասնակցությունը «Սասունցի Դավիթ» էպոսի համահավաք տեքստի ստեղծման գործին։ Գ. Արովը խոշոր աշխատանք է կատարել։ Նաև Ստ. Մալխասյանցի «Հայերէն բացատրական բառարան»-ի հրատարակման ուղղությամբ լինելով այդ մեծարժեք աշխատության խմբագիրներից մեկը։

Պրոֆեսոր Գևորգ Արովը հասարակայնությանը հայտնի էր որպես արտակարգ աշխատասեր, կոմունիստական բարձր սկզբունքայնությամբ ու գիտական մեծ էրուդիցիայով օժտված գիտնական։ Նա մեծ հաճույքով էր օգնում երիտասարդ գիտնականներին, նպաստում դիսերտացիաների պաշտպանությանը։

Գրական հասարակայնությունը նրան ճանաչում էր նրա բանաստեղծություններով ու գեղարվեստական արձակ երկերով, ինչպես նաև բազմաթիվ թարգմանություններով, որ նա պարբերաբար կատարում էր ռուս մեծ գրողներից։

1961 թ. մայիսից մինչև 1964 թ. ապրիլը պրոֆեսոր Արովը հանդիսանում էր Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի «Տեղեկագրի» (հասարակական սերիա) խմբագիրը։ Նա մեծ եռանդ ու ջանք է գործադրել ամսագրի հրատարակման, նրա գիտական բարձր մակարդակն ապահովելու գործում։ Հիվանդության պատճառով աղատվելով խմբագրի պաշտոնից նա արժանացավ ՀՍՍՌ ԳԱ նախագահության հատուկ շնորհակալությանը «անբասիր և բարեխիղճ աշխատանքի համար»։

Սովետական կառավարությունը բարձր է գնահատել Գ. Արովի վաստակը։ Նա պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով և մեդալներով։ Հայաստանի կառավարությունը նրան շնորհել է արվեստի վաստակավոր գործչի պատվավոր կոչում։

Գ. Արովը լի էր ստեղծագործական անսպառ եռանդով և ուներ գիտական աշխատանքի լայն ծրագրեր, որոնց իրականացման վրա նա աշխատում էր վերջին տարիներս։ Մասնավորապես նա պատրաստում էր տաղաչափության վերաբերյալ հետազոտություն։

Գրողի, գիտնականի, կուլտուրայի գործչի, աղնիվ կոմունիստի՝ Գևորգ Արովի հիշատակը վառ կմնա նրա ընկերների ու բոլոր նրան ճանաչողների սրտերում։